«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ <<Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորությունը>> թեմայի ուսումնասիրման առանձնահատկությունները հիմնական դպրոցում

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց պատմություն

Հեղինակ՝ Լիլյա Մանյան

ՄԱՐԶ՝ Լոռի

Ուսումնական հաստատություն՝ Ծաթերի հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն——————————————————————————————3
Գլուխ 1. Բագրատունիների ժամանակաշրջանի իշխանությունը
Բաժին1. Բագրատունյաց թագավորության կառավարման կենտրոնական մարմինները ——————————————————————————————6
Բաժին2. Բագրատունյաց թագավորության առանձնահատկությունները ——————7
Բաժին 3. Արքունի գործակալությունները և բանակը_____10
Գլուխ 2. Բագրատունյաց եկեղեցին և տնտեսությունը
Բաժին 1. Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները_____11
Բաժին 2. Գյուղատնտեսությունը և ավատատիրական հողատիրությունը_____14
Գլուխ 3. «Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորությունը» թեմայի ուսուցման կազմակերպման գործընթացի արդյունավետ պայմանները հիմնական դպրոցում:
Բաժին 1. «Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորությունը» թեմայի ուսուցման առանձնահատկությունները հիմնական դպրոցում_____14
Եզրակացություն_____22
Գրականության ցանկ_____24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականության հիմնավորումը, նպատակը եվ խնդիրները: Հայ ժողովրդի պատմության մեջ Բագրատունիների թագավորության կառավարման ժամանակաշրջանը այն կարևորագույն թեմաներից է,որին պետք է անընդհատ անդրադարձ կատարել:Դարերի հեռվից լուսաբանելով այս ժամանակաշրջանը,մենք համոզվում ենք,որ ինչպես այն ժամանակ, այնպես էլ մեր օրերում միայն միասնականությունը,համախմբվածությունը և զենքի ուժը կօգնի մեր ժողովրդին իր դիրքերն ամուր պահպանել աշխարհաքաղաքական այս բարդ իրավիճակում:

IX դ. վերջերին հայ ժողովրդին հաջողվեց վերականգնել իր պետական անկախությունը Բագրատունիների գլխավորությամբ: Դրա համար առկա էին և՛ ներքին, և՛ արտաքին նախադրյալներ: Արտաքին գործոնների շարքում կարևորվում էր հատկապես Արաբական խալիֆայության թուլացումը: Ընդ որում պետք է ի նկատի ունենալ, որ Աշոտ Ա Բագրատունու կառավարման տարիներին Հայաստանի ներքին կյանքը նկատելիորեն կայունացավ: Նրան հաջողվեց համախմբել երկրի ռազմաքաղաքական և տնտեսական կարողություններն ու ձեռնամուխ լինել Հայաստանի պետականության վերականգնմանը:

Արաբական խալիֆայության թուլացմանը զուգահեռ հայ իշխանական տներն ընդարձակում էին իրենց տիրույթները: Դա կատարվում էր ինչպես նոր տարածքներ ձեռք բերելու, այնպես էլ՝ լքված ու խոպան հողերը մշակելի դարձնելու միջոցով: Սա հանգեցնում էր ավատատիրական հողերը մշակելի դարձնելու միջոցով: Սա հանգեցնում էր ավատատիրական խոշոր հողատիրության ձևավորմանը:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանում գերիշխող պայմանական հողատիրությունն աստիճանաբար իր տեղը զիջում էր ժառանգականին: եվ հենց դրա շնորհիվ էլ հայ իշխանական տները, տնտեսական կամ ռազմական առումով ուժեղանալով, ինքնուրույնանալու միտումներ էին դրսևորում: Ընդ որում այդ ներքին տեղաշարժերը հանգիստ ու հանդարտ չէին ընթանում: Դրանք հանգեցնում էին իշխանական տների կողմում փոփոխությունների՝ որոշ իշխանական տներ թուլանում

էին և ասպարեզից հեռանում, իսկ որոշ իշխանական տներ էլ, ընդհակառակը, զորեղացել էին և երկրի կյանքում կարևոր դերակատարություն ունեին:

Թեմայի լուսաբանումն ունի գիտական, քաղաքական և գիտաճանաչողական կարևոր նշանակություն, հատկապես մեր օրերում, երբ թուրք-ադրբեջանական պատմագիտության մեջ պատմական իրողությունների նենգափոխմամբ մերժվում է Հայոց միջնադարյան պետականության գոյությունը: Այս առումով հայագիտության համար Հայոց պետականությանը վերաբերող յուրաքանչյուր աշխատանք առանձնակի կարևորություն է ստանում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել «Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորությունը» թեմայի ուսուցման գործընթացի արդյունավետ մանկավարժական պայմանները հիմնական դպրոցում:

Հետազոտության խնդիրներն են.

1. Ներկայացնել Բագրատունյաց արքայատոհմի դերը հայոց պետականության վերականգնման և ամրապնդման գործում
2. Լուսաբանել պետական կառավարման կենտրոնական մարմինների դերը և նշանակությունը
3. Ներկայացնել արքունի գործակալությունների գործառույթները և եկեղեցին՝ որպես ազգապահպան օղակ
4. Ընդգծել Բագրատունիների գործունեության արդյունքում վերելք ապրող տնտեսությունը
5. Ներկայացնել «Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորությունը» թեմայի ուսուցման գործընթացի արդյունավետ պայմանները:

Իմ կարծիքով Բագրատունյաց թագավորության պատմությունը հայ ժողովրդի պատմություն կարևորագույն թեմանից մեկն է, որի դասավանդումը աշակերտներին հնարավորություն կտա ծանոթանալ դարաշրջանին, դրա ընթացքում անկախության համար մղված պայքարին, անկախության ձևավորմանն ու թագավորության հզորացմանը: Միաժամանակ մատուցված նյութի և ներկայիս ժամանակաշրջանի համանմանությունն էլ հնարավորություն է տալիս թեման ավելի հասկանալի ու հետաքրքիր դարձնել աշակերտների համար: Մեր օրերում դպրոցի կարևորագույն

խնդիրներից է դաստիարակել իր պատմությանը քաջատեղյակ սերունդ,որ կարողանան անցյալի սխալներից դասեր քաղել և հետագայում ճիշտ կողմնորոշվել:

ԳԼՈՒԽ 1. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բաժին 1. Բագրատունյաց թագավորության կառավարման կենտրոնական մարմինները

Ֆեոդալական տիպի պետության զարգացման գործընթացում կան որոշակի առանձնահատկություններ: Վաղ ֆեոդալական հասարակարգին համապատասխանել է կենտրոնացված ուժեղ իշխանությունը: Զարգացած ֆեոդալիզմի կամ ֆեոդալական մասնատվածության շրջանում գերիշխող է եղել պետական կառավարման ապակենտրոնացված, դասային ներկայացուցչական միապետությունը: Ֆեոդալիզմի պատմության վերջին փուլում՝ 15-16-րդ դդ.՝ Արևմտյան Եվրոպայի երկրներում, 17-18-րդ դդ.՝ Ռուսաստանում ֆեոդալական հասարակության ընդերքում նոր, բուրժուական սոցիալ-տնտեսական հարաբերությունների ծագման և զարգացման նախադրյալներով արդեն իշխող է դառնում բացարձակ միապետությունը:

Հայաստանում այս օրինաչափությունները խախտվել են: Պատճառը՝ հայկական պետականության մերթընդմերթ կրկնվող, երբեմն մի քանի դարյա ընդհատումները, օտար տիրապետության ներքո անցնելով՝ բնականոն զարգացման օրինաչափություններից շեղումներն են եղել [3, էջ 114]:

Արքունիքը գտնվում էր երկրի մայրաքաղաքում՝ Անիում: Կառավարման կենտրոնական համակարգում որոշ փոփոխություններով վերականգնվեցին երբեմնի գործակալությունները:

«Իշխանաց իշխանի» պաշտոնը Բագրատունյաց Հայաստանը ժառանգեց արաբական ժամանակաշրջանից, սակայն այժմ նրա բնույթն այլ էր: Եթե արաբական շրջանի իշխանաց իշխանը ոստիկանի փոխանորդն էր, իսկ իրականում Հայաստանի կառավարիչը, ապա Բագրատունյաց շրջանում այն հիշեցնում էր Արշակունյաց ժամանակաշրջանի հազարապետին: «Իշխանաց իշխանը գլխավորում էր Հայաստանի բոլոր իշխաններին: Նրան էին ենթարկվում գավառապետ բերդապահ իշխանները, քաղաքապետերը և վերջիններիս օգնական շուկայի հսկիչները (մուհթասիբները): Նա էր կառավարում երկրի հարկերի հավաքման գործը: Ամեն մի նահանգի իխան ինքն էր նշանակում հարկահաններին, որոնց հավաքած գումարը հասցնում էին մայրաքաղաք՝

արքունի գանձարան»: Պատերազմի դեպքում նա սպարապետի հետ միասին գլխավորում էր հայոց զորքը: Ամեն մի իշխան կամ տեղական թագավոր ընդհանրապես ուներ իր գունդը (կամ գնդերը)՝ հատուկ դրոշով և զինանշանով: Առաջին Բագրատունիների օրոք բոլոր սպարապետները թագավորական ընտանիքից էին, հետագայում սպարապետներ են հանդես գալիս տարբեր իշխանական տներից, ինչպես օրինակ Մարզպետունիներից, Պահլավունիներից:

Թագադիր ասպետի պաշտոնը (որն Արշակունյաց շրջանում հենց Բագրատունիներն էին վարում) բացակայում էր, քանի որ ինչպես տեսանք, այս ժամանակաշրջանում Հայոց կաթողիկոսն էր թագադրման ժամանակ թագը դնում նորընծա տիրակալի գլխին: Դատավարության գործակալությունը նախկինի պես պատկանում էր կաթողիկոսին: Նա էր գլխավոր դատավորը [4, էջ 302]:

Բաժին 2. Բագրատունյաց թագավորության առանձնահատկությունները

ա. Թագավորական իշխանությունը

«Հայոց Բագրատունիների թագավորությունը կառավարման ձևով ավատատիրական միապետություն էր, որի գլուխ կանգնած Հայոց թագավորը երկրի լիիշխան տիրակալն էր՝ օժտված քաղաքական, ռազմական, դատաիրավական ու հոգևոր-եկեղեցական լայն իրավազորությամբ: Թագավորն էր տնօրինում երկրի ներքին ու արտաքին-քաղաքական գործընթացները: Նրա անձը համարվում էր սրբազան ու անձեռնամխելի»: Բագրատունյաց թագավորության պետական կառավարչությունը հիմնականում ձևավորվում է Աշոտ Ա Բագրատունու օրոք: Այդ կորովաշատ ու հեռատես արքան հաջողությամբ լուծում է պետության ներքին կյանքին, զինված ուժերին, արտաքին քաղաքականությանը, մշակույթին, դատաիրավական և հոգևոր-եկեղեցական ոլորտներին առնչվող խնդիրները՝ ցուցաբերելով պետական գործչի մեծ կարողություն: Նպատակասլաց ջանքերով Աշոտ Ա-ն դրեց Հայոց միասնական պետականության, քաղաքական անկախության հիմքերը: Նա ստորակայական կապերի միջոցով ապահովեց երկրի միասնությունը և, իր շուրջը համախմբելով իշխաններին, մեղմացրեց նրանց կենտրոնախույս նկրտումները: Աշոտ Ա-ն ստեղծեց Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի իշխանների համադաշինք՝ այն ամրապնդելով

ռազմաքաղաքական զորակցությամբ: Երկրի անկախության հիմքերը դնելուց հետո նա ձեռնամուխ եղավ պետական բարեփոխությունների իրագործմանը: Սմբատ Ա-ի օրոք վերջնականապես ձևավորվեց թագավորության կառավարման համակարգը [1, էջ 174]:

Բագրատունյաց թագավորությունը սկզբում բաղկացած էր կիսանկախ իշխանություններից, որոնց տիրակալներն ունեին սեփական զորք, հողատիրույթներ և դատաիրավական համակարգ: Ձևավորվում է ավատատիրական աստիճանակարգությունը, և գերակա-ստորակայական հարաբերությունները ստանում են աստիճանակարգային բնույթ: Աշոտ Ա-ի և Սմբատ Ա-ի օրոք վրաց Բագրատունիները ստորակայական կախվածության մեջ էին Հայոց թագավորներից: Կոստանդին Ծիրանածինն Աշոտ Ա-ին դիտում է որպես «արևելքի բոլոր շրջանների տիրակալ»՝ նկատի ունենալով քրիստոնյա Արևելքը: Հովհաննես Դրասխանակերտցին Սմբատ Ա-ին կոչում է «բոլորից արևելեայցս գլխաւոր»: Այդպիսով՝ ավատատիրական աստիճանակարգում առաջին տեղը զբաղեցնում էր Հայոց թագավորը, երկրորդ աստիճանում՝ Ատրներսեհ բագրատունին: Վերջինս պարտավոր էր անհրաժեշտության դեպքում զորքով օգնել Հայոց թագավորին:

Երրորդ աստիճանում Հայոց թագավորից կախման մեջ գտնվողներն Արծրունի և Սյունյաց գաբերեց իշխաններն էին, որոնց ստորադրյալները՝ գագակալ իշխանները, զբաղեցնում էին չորրորդ տեղը: Վերջին՝ հինգերորդ աստիճանում մանր ազատանին էր, որից համալրվում էր գանհերեց իշխանների այրուձին: Սմբատ Ա-ի հաջորդների օրոք Հայոց թագավորները Խալիֆայության կողմից ճանաչվեցին Հայաստանի տեղական տիրակալների նկատմամբ «շատ շատեր»: Ասողիկը գրում է, որ Աշոտ Բ թագավորը Բյուզանդիայից «դառնայ յաշխարհս մեր, և գտանէ զծառայս Հօր իւրոյ թագաւորեալ. զինքն անուանեաց Շահնշահ, այսինքն՝ թագաւորաց թագաւոր»: Վարդան Արևելցու (Վարդան Վարդապետ - խմբ.) վկայությամբ Աշոտ Երկաթը հնազանդեցրեց թագավոր հռչակված սպարապետ Աշոտին՝ Շապուհի որդուն, ու Վասպուրականի Գագիկ թագավորին, իշխաններին և «կոչեցաւ ի վերայ նոցա Շահնշահ»:

«XI-XIV դդ. Կիլիկյան Հայաստանն իր հասարակական-քաղաքական և տնտեսական մակարդակով զարգացած ավատապետություն էր: Հիմնականում զարգանալով մայր Հայաստանի ավատատիրական կարգերի ավանդույթների հիման

վրա՝ Կիլիկյան Հայաստանի հասարակական և պետական կարգը որոշ չափով կրել է նաև բյուզանդական ու արևմտաեվրոպական պետությունների ազդեցությունը, որն արտահայտվում էր հատկապես կառավարման մարմինների անվանումներում (գունդստաբլ, դուկ, կապիտան, կիր, կոմս, մարաջախտ, պարոն, պռոքսիմոս, ջամբռայ, կանցլեր, սենեսկալ և այլն)»: [5,էջ 412]

Հայոց թագավորը, որպես պետության գլուխ և երկրի գերագույն տեր, օժտված էր բացառիկ իրավունքներով ու առանձնաշնորհումներով: Թագավորն ինքնակալորեն ղեկավարում էր արտաքին հարաբերությունները, գլխավորում բանակը, պատերազմ հայտարարում, հաշտություն և պայմանագրեր կնքում, դեսպանություններ ընդունում և ուղարկում, օրենքներ հրապարակում, դրամ հատում, հիմնում քաղաքներ ու բերդեր, մաքսեր գանձում ներմուծվող ապրանքներից, լուծում համապետական այլ կարևորագույն հարցեր: Նա իր մշտական դեսպաններն ուներ Բյուզանդիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Եգիպտոսում, Մոնղոլիայում և այլ պետություններում:

Նա էր օրենսդիր իշխանության աղբյուրը, երկրի գլխավոր դատավորը: Բագրատունի արքաների դատաստանական լայն իրավազորությունը մեծացնում էր նրանց հեղինակությունը, կասեցնում իշխանների կենտրոնախույս քայլերը: Թովմա Արծրունու Անանուն շարունակողը Վասպուրականի Գագիկ թագավորին բնութագրում է որպես «իրաւանց և դատաստանաց արդարով կշռիչ»: Պետական առաջին աստիճանի դատարան էր Սսի արքեպիսկոպոսական ատյանը, որը ջանցլերի նախագահությամբ քննում էր բարձրադաս հոգևորականների, ինչպես նաև օտարերկրացիների վեճերն ու հանցագործությունները: Պետական առաջին ատյանի դատարան էր նաև պայլի ատյանը, որը Սսում գլխավորում էր արքունի պայլը, թագավորական քաղաքներում՝ գունդստաբլ դուկը, Այաս նավահանգստում՝ կապիտանը:

Բագրատունի և տեղական թագավորներն ունեին ժամանակին համահունչ պալատական շքակարգ: Բագրատունի թագավորները կրում էին «մարգարտախուռն թագ»: Տեղական թագավորները ևս թագ էին կրում [2, էջ 365]:

Բաժին 3. Արքունի գործակալությունները և բանակը

Բագրատունի թագավորները, բնականաբար, ի վիճակի չէին անմիջաբար տնօրինելու պետության գործերը, լուծելու նրա առջև ծառացած շատ խնդիրներ: Երկի կառավարումը ճկուն ու լիարժեք դարձնելու համար արքունիքում ստեղծված էին հատուկ պաշտոններ: Պաշտոնը կոչվում էր «գործ», իսկ պաշտոնյան՝ «գործակալ», որից և «գործակալութիւն» արտահայտությունը: «Գործակալներ» էին կոչվում նաև մանր պաշտոնյաները: Գլխավոր գործակալությունների գլուխ էին կանգնած նշանավոր տոհմերի ներկայացուցիչները: Արքունի կարևորագույն պաշտոնյաներն էին իշանաց իշխանը, սպարապետը, մարզպանը, հազարապետը որ արքունի գանձարանապետը [3, էջ 204]:

Իշխանաց իշխանի պաշտոնը հիմնականում վարում էին Բագրատունի թագավորների ժառանգները: Իշխանաց իշխանը երկրորդ դեմքն էր թագավորությունում: Նա թագավորի շուրջ էր համախմբում իշխաններին, հարկ եղած դեպքերում պատժում անհնազանդներին: Աշոտ Ա-ի որդի Սմբատ Ա-ն մինչև թագավորելը «իշխան իշխանացն Հայոց էր», իսկ նրա գահակալման տարիներին իշխանաց իշխանի պաշտոնը վարում էր եղբայրը՝ Դավիթը:

Իշխանաց իշխան նշանակելիս կատարում էին հատուկ արարողություն: Աշոտ Բ-ն իշխանաց իշխան կարգվելիս օժտվեց «գեղեցիկ զարդուք և զինուք և պերճապաճոյճ երանգս զգեստուց, և կամար ականակապ ընդ մէջ ածեալ» [4, էջ 305]:

Բագրատունիների Հայոց թագավորությունում հիշվում է նաև մարզպանի պաշտոնը: Ըստ երևույթին այն վարողը զբաղվում էր գավառներին առնչվող աշխարհիկ ու եկեղեցական խնդիրներով: Նա էր կարգավորում գավառների միջև ծագած վիճահարույց հարցերը: Այս պաշտոնը սովորաբար տրվում էր մյուս տոհմերից սերած իշխաններին՝ նրանց միջոցով գավառակալ իշխաններին և նրանց զորուժը համախմբվելու և արքունիքի հետ կապելու համար: Այդ նպատակով Ամբատ Ա-ն հայոց մարզպան է կարգում Վասպուրականի գահերեց Գագիկ Արծրունու եղբորը [3, էջ 198-199]:

ԳԼՈՒԽ 2. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Բաժին 1. Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները

IX դարի առաջին կեսը ծանր ժամանակաշրջան էր թե՛ երկրի, թե՛ հայոց եկեղեցու համար: Կաթողիկոս Հովհաննես Դ Օվայեցու մահվանից հետո (855թ.)՝ նույն թվականին Սմբատ Սպարապետի հրամանով Շիրակավանում հրավիրում է եպիսկոպոսների ժողով, որը կաթողիկոս է ընտրում Զաքարիա Ա Զագեցուն: Զաքարիա Ա Զագեցու օրոք հայոց եկեղեցին սատարում է Աշոտ Բագրատունու համակենտրոնացնող քաղաքականությունը: Այն միավորում էր երկրի՝ որպես ազգային մեկ ընդհանրություն՝ դյուրացնելով հայոց պետականության վերականգնումը: 858թ. աքսորից վերադարձած կեղծուրաց հայ իշխանները Զաքարիա Ա Զագեցու օգնությամբ վերադառնում են քրիստոնեության գիրկը: Թեև իսլամը մահավճիռ էր նախատեսում այդ կրոնն ուրացողների նկատմամբ, սակայն տվյալ իրավիճակում դա բացառվում է շնորհիվ Հայաստանի աճող հզորության և ինքնուրույնության:

Կաթողիկոսը եռանդուն աջակցում է Աշոտ Բագրատունու քաղաքական ջանքերին, նպաստում նրա շուրջ հայ իշխանների համախմբմանը [2, էջ 536]:

«862թ. Կ. Պոլսի Փոտ պատրիարքը հռոմեադավան և հունադավան եկեղեցիների միջև հարաբերությունների սրման պայմաններում ջանում է դաշնակից ձեռք բերել՝ ի դեմս հայոց եկեղեցու և նրա առաջնորդի»: Ինչպես վերը նշվել է, նա թղթով դիմում է Զաքարիա Ա Զագեցուն՝ նրան համարելով Թադեոս առաքյալի ու Գրիգոր Լուսավորչի Աթոռի ժառանգորդ, սակայն միաբնակությունը դիտում է իբրև հերձված: Զաքարիա Ա Զագեցին չի ընդառաջում Փոտ պատրիարքին և մերժում է նրա առաջադրած հավատո դրույթները: Աշոտ Բագրատունին Շիրակավանում 862թ. ժողով է հրավիրում, որտեղ որոշվում է գրավոր պատասխան տալ պատրիարքին: Ժողովը մերժում է քաղկեդոնականությունը և նրանով զորացած նեստորականության սկզբունքները, ազդարարում հայոց եկեղեցու հավատարմությունն առաջին երեք տիեզերաժողովների հաստատած դավանությանը: Պատասխանում հիմնավորվում է հայոց եկեղեցու դավանաբանական դիրքորոշումը, որը բխում էր Եփեսոսի 431թ. ժողովի որոշումներից

և Կյուրեղ Ալեքսանդրացու սահմանած հավատո սկզբունքներից: Նաև մերժվում է Եվտիքեսի ծայրահեղ միաբնակությունը:

«Կաթողիկոսը հաջողությամբ հարթում է նաև իր և Սևանա վանքի վանահայր Մաշտոցի (հետագայում՝ կաթողիկոս) միջև ծագած կնճիռները: Վերջինս առանց նրա գիտության շփման մեջ է մտնում քաղկեդոնականների հետ, ուստի կաթողիկոսը սպառնում է բանադրել նրան: Վեճը լուծվում է խաղաղությամբ: Գեորգ Բ Գառնեցին 885թ. գլխավորում է Աշոտ Ա-ի թագադրման ծիսահանդեսը, օրհնում նրա թագը»: Կաթողիկոսի և Աշոտ Ա-ի համագործակցությունը շարունակվում է նաև հետագայում: 890թ. մահվան մահճին գամված թագավորն իր մոտ է հրավիրում նրան և թագավորական գանձարանից առատ միջոցներ հատկացնում եկեղեցու կարիքների համար [1, էջ 119]:

Գեորգ Բ Գառնեցին կատարում է նաև Սմբատ Ա-ի թագօրհնեքը և ըստ ամենայնի սատարում նրան: Նույն ժամանակ Մուհամիդ խալիֆան Ատրպատականի ոստիկան Աֆրինի միջոցով թագ է ուղարկում Սմբատ Ա-ին: Կաթողիկոսը Շիրակավանի Ս. Փրկիչ եկեղեցում վերստին օրհնում է նրան՝ «Եղ ի գլուխ զթագ թագավորութեան»: Աբաս սպարապետը չի հանդուրժում դա: Նա իր կողմնակիցների օգնությամբ ջանում է գահընկեց անել Գոերգ Բ Գառնեցուն և այդպիսով ի դերև հանել թագի նկատմամբ Սմբատ Ա-ի իրավունքը, որը սրբագորոծվել էր կաթողիկոսի ձեռքով: Աբասը փորձում է դա ի կատար ածել հոգևոր վերնախավում մեծ հեղինակություն վայելող Սևանի վանքի առաջնորդ Մաշտոցի միջոցով՝՝ նրան խոստանալով կաթողիկոսական գահը: Սակայն վերջինս չի գայթակղվում և մերժում է նրա առաջարկը: ավելին՝ Մաշտոցին հաջողվում է Աբասին համոզել ենթարկվել եղբորը: Քանի որ Դվինի 893թ. ավերիչ երկրաշարժի ժամանակ ավերվում են նաև քաղաքի վանքերն ու եկեղեցիները և կաթողիկոսարանը, Գևորգ Բ Գառնեցին տեղափոխվում է Զվարթնոց եկեղեցի [4, էջ 254]:

«Հաջորդ տարի Ատրպատականի Աֆշին ոստիկանը ներխուժում է Հայաստան և գրավում Նախճավանը: Բագրատունյաց թագավորության դեմ ոստիկանի կողմից պատերազմ սանձազերծելը կանխելու նպատակով Գեորգ Բ Գառնեցին մեկնում է նրա մոտ, սակայն ձերբակալվում է: Երկու ամիս անց նա ազատ է արձակվում շնորհիվ հայ իշխանների մուծած փրկավճարի: Կյանքի վերջին տարում Գեորգ Բ Գառնեցին փորձում

է վերջ տալ Արծրունի եղբայրներ Աշոտի, Գագիկի և Գուրգենի դեմ այդ տոհմի երկրորդական ճյուղի պարագլուխ Գագիկ ապումրվանի լարած դավերին: Նա 897թ. ժամանում է Վասպուրական, որտեղ էլ նույն թվականի ամռանը կնքում է իր մահկանացուն և թաղվում՝ Վանի մոտ՝ Ձորովանքում»: 897թ. հունիսի 18-ին կաթողիկոս է ընտրվում վերոհիշյալ Մաշտոց Եղվարդեցին, որը գահակալում է ընդամենը 7 ամիս: Նա ավարտում է հայոց եկեղեցու ծեսերն ու արարողությունները բովանդակող ժողովածուն՝ «Մաշտոց ծիսարանը» և էականորեն նպաստում հայոց եկեղեցու ծիսավանդական ինքնուրույնության պահպանմանը: Մաշտոց եղվարդեցուն 898թ. Սմբատ Ա-ի կամքով հաջորդում է նրա ազգական աշակերտը՝ պատմագիր Հովհաննես Ե Դրասխանակերտցին, որի օրոք երկրով, ինչպես նշվել է, կաթողիկոսը՝ որպես միջնորդ, երկու անգամ գնում է Ատրպատականի ոստիկան Յուսուֆ Սաջյանի մոտ՝ կամենալով նրան հաշտեցնել Սմբատ Ա-ի հետ: Սակայն ոստիկանը 909թ. բանտ է նետում նրան: Փախուստով ազատվելով՝ կաթողիկոսը հեռանում է հայոց Աղվանք, իսկ այնտեղից անցնում Վրաստան՝ Ատրներսեհ թագավորի մոտ: Այնտեղ նա Կ. Պոլսի Նիկողայոս պատրիարքից 915թ. նամակ է ստանում: Նամակում ցավակցություն էր հայտնվում Հայաստանի գլխին պայթած արհավիրքների առնչությամբ: Նույն ժամանակ պատրիարքը նամակներ է ուղարկում նաև Սմբատ Ա-ին:

Հովհաննես Դրասխանակերտցին 915թ. ժամանում է Տարոն գավառ, որտեղից նամակ է ուղարկում Կոստանդին Ծիրանածին կայսրին և խնդրում զորակցել Հայաստանին՝ առանց դավանաբանական խնդիրներ արծարծելու: Կայսրն իր մոտ է հրավիրում Աշոտ Բ թագավորին ու կաթողիկոսին: Սակայն վերջինս հրաժարվում է Կ. Պոլիս մեկնելուց, որպեսզի չկասկածվի քաղկեդոնականությանը հարելու մեջ: Նա Տարոնից ժամանում է Դարանաղի գավառում գտնվող Սեպուհ լեռան ճգնավորների մոտ՝ Մանյա Այր, որտեղ ժամանակին ճգնել էր Գրիգոր Լուսավորիչը: Այնտեղ անցկացնելով ինը ամիս՝ Դրասխանակերտցին մեկնում է Այրարատ, ջանում օժանդակել երկրի միասնության վերականգնմանը, ապարդյուն փորձում Աշոտ Երկաթին հաշտեցնել նրա հորեղբայր Շապուհի որդի Աշոտի հետ, որին Յուսուֆը թագ էր ուղարկել: ԿԱթողիկոսը նաև փորձում է համոզել Աշոտ Երկաթին հաշտվել Յուսուֆ ոստիկանի հետ: Երբ Աշոտ Երկաթը դաշնագիր է կնքում Յուսուֆին հաջորդած Սբուք

ոստիկանի հետ, դա կաթողիկոսին Դվինի կաթողիկոսարանը վերականգնելու և այնտեղ վերադառնալու հույսեր է ներշնչում: Բայց Յուսուֆի օրոք Դվինի կաթողիկոսարանն ավերված էր, իսկ Ս. Գրիգոր Մայր եկեղեցու կողքին կառուցվել էր մզկիթ:

Բաժին 2. Գյուղատնտեսությունը և ավատատիրական հողատիրությունը

IX-XI դդ Հայաստանի պետական և տնտեսական կյանքի հիմքը երկրագործությունն ու անասնապահությունն էին [3,էջ203]: Հիմնական արտադրողը գյուղական բնակչությունն էր, որը միավորված էր գյուղական համայնքներում: Պարբերաբար կատարվում էր հողաբաժանում՝ ըստ ծխերի (բաժանվում էին սոսկ մշակելի հողերը): Ներհամայնքային գործերը վարում էր գյուղի ծերերի ժողովում ընտրվող գեղջավագը: Անկախ պետականության ու խաղաղության պայմաններում հնարավոր է դառնում ընդարձակել մշակելի հողերը: Վճռական նշանակություն ուներ ոռոգման ցանցի ընդլայնումը: X դ. Սյունիքում, Վասպուրականում, Շիրակում (Անի քաղաքին հարող շրջանում) և այլուր անց են կացվում ջրանցքներ:

ԳԼՈՒԽ 3

«ՄԵԾ ՀԱՅՔԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Բաժին 1. «Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորությունը» թեմայի ուսուցման առանձնահատկությունները

Հիմնական դպրոցի սովորողների կողմից «Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորությունը» թեմայի ուսումնասիրությունն իրանացվում է յոթերորդ դասարանում: Ելնելով թեմայի առանձնահատկություններից, ժամանակակից պահանջներից, ինչպես նաև սովորողների հետաքրքրվածությունից՝ կարող ենք եզրահանգել, որ անհրաժեշտ են նոր մոտեցումներ այդ գործընթացի կազմակերպման համար:Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը դասապրոցեսի ընթացքում օգնում աշակերտներին ավելի լայն պատկերացում կազմել տվյալ ժամանակաշրջանի վերաբերյալ:

Ստորև ներկայացնում ենք «Մեծ Հայքի Բագրատունիների թագավարությունը» թեմայի ուսուցման գործընթացի իրականացման դասի պլանի օրինակ:

Դասարանը 7-րդ ամսաթիվը _____

Ուսուցիչը Մանյան Լիլյա

Առարկան Հայոց պատմություն

1. **Դասի թեման** Հայաստանի անկախության վերականգնումն ու ամրապնդումը

Հիմնական հարցերը

- Բագրատունյաց թագավորության ջանքերը,անկախության վերականգնման ու ամրապնդման համար
- Ժամանակաշրջանի կառավարման կենտրոնական մարմինները
- Բագրատունյաց ժամանակաշրջանի արքունի գործակալությունները,
- Բագրատունյաց եկեղեցին և տնտեսությունը
- Ժամանակաշրջանի պատմական ձեռքբերումները:

2. **Դասի նպատակը**

Բագրատունյաց դինաստիայի ժամանակաշրջանի լուսաբանումն ունի գիտական, քաղաքական և գիտաճանաչողական կարևոր նշանակություն, հատկապես մեր օրերում, երբ թուրք-ադրբեջանական պատմագիտութան մեջ պատմական իրողությունների նենգափոխմամբ մերժվում է Հայոց միջնադարյան պետականության գոյությունը: Այս առումով հայագիտության համար Հայոց պետականությանը վերաբերող յուրաքանչյուր աշխատանք առանձնակի կարևորություն է ստանում:«Հայաստանի անկախության վերականգնումն ու ամրապնդումը» թեմայի նպատակներն են.

- Ձեռք բերել գիտելիքներ Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, ակնառու պատմական գործիչների մասին:
- Համեմատել Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, իրադարձությունները, կարծիք հայտնել դրանց արդյունքների ու հետևանքների վերաբերյալ:
- Հասկանալ և արժևորել Բագրատունյաց թագավորության և ներկայիս ժամանակաշրջանի միջև եղած աղերսները՝ կարևորել պատմական փաստերին ու իրողություններին լրջությամբ վերաբերվելն ու արժևորելը:
- Այս ամենի հիման վրա ձևավորել ու զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն. աշակերտներին խրախուսել և

զարգացնել նոր նյութի ընկալման ինքնարտահայտման և ինքնուրույն աշխատելու կարողությունները:

3. **Դասի խնդիրները**

ա) Կրթական (ակադեմիական)

- գիտելիք

- Ներկայացնել Հայաստանի քաղաքական կյանքում Բագրատունյաց արքայատոհմի դերակատարությունը:
- Լուսաբանել պետական կառավարման կենտրոնական մարմինների դերը և նշանակությունը:
- Ներկայացնել եկեղեցին որպես ազգապահպան օղակ:
- Տարբերակել պետականության վերականգնման ներքին և արտաքին նախադրյալները:

- հմտություն

- Ձևավորել Բագրատունյաց թագավորության պատմական փաստերի ճանաչման հմտություններ:
- Հնարավորինս նպաստել պատմական մտածողության զարգացմանը:

բ) Դաստիարակչական

- արժեքներ

- Կարևորել Բագրատունյաց թագավորության դերը պատմական ժամանակաշրջանի համար:
- Երեխաներին դեռևս այդ տարիքում բացատրել սեփական պատմության իմացության կարևորությունը:

- Վերաբերմունք

- Երեխաների մոտ ձևավորել սեփական պատմության նկատմամբ հպարտության և արժանապատվության զգացում:
- Ձուգադրել այս կամ այն պատմիչների, պատբանների աշխատություններն ու ունենալ սեփական, ուրույն կարծիքը անառարկելի, վիճահարույց հարցերի շուրջ:
- Մեծացնել Բագրատունյաց թագավորության նկատմամբ աշակերտների հետաքրքրվածության մակարդակը:

գ) Զարգացման

- մտածողություն

- Ժամանակաշրջանը և Բագրատունիների արքայատոհմի պատմությունը ներկայացնել հնարավորինս մանրամասն՝ առաջացնելով աշակերտների հետաքրքրասիրությունը, որից հետո կապահովվի հետադարձ կապը ուսուցչի և աշակերտի միջև. աշակերտները կսկսեն հարցեր ուղղել ուսուցչին:
- երևակայություն
- Պատմական փաստերի մատուցումը զուգակցել հետաքրքիր փաստերի, իրադարձությունների հաղորդմամբ, ինչը կշարժի աշակերտների երևակայությունը:
- հիշողություն և ուշադրություն
- Թվական տվյալները ներկայացնելիս կապեր ստեղծել ներկայիս իրադարձությունների կամ յուրաքանչյուր աշակերտի համար կարևոր որևէ իրադարձության հետ:
- Զարգացնել ուշադրությունը կենտրոնացնելու հմտությունները
- զգացումներ, հույզեր, ապրումներ
- Այդ շրջանի պատմության թե՛ փառավոր և թե՛ ողբալի իրադարձությունները ներկայացնելիս դրանց վրա սևեռել աշակերտների ուշադրությունը: Դա կունենա մեկ պարզ նպատակ. չկրկնել անցյալի սխալները և կամ էլ անցյալի փառավոր ոգով նախապատրաստվել գալիք փորձություններին:

4. **Ուսուցման միջոցները (ուսումնադիտողական պարագաներ)**

ա) դասագիրք

Հայոց պատմության 7-րդ դասարանի դասագիրք

բ) ուսումնական նյութեր

Քարտեզ, պաստառ, կպչուն թերթիկներ, գունավոր մարկերներ, համակարգիչ, տետր

5. **Ներառարկայական և միջառարկայական կապեր**

Կապեր ստեղծել պատմական այլ ժամանակաշրջանների հետ, կատարել համեմատություններ: Միջառարկայական կապ կարելի է ստեղծել հետևյալ առարկաների հետ.

- ***Համաշխարհային պատմություն*** – Մեծ Հայքի և Բյուզանդիայի, Արաբական խալիֆայության հարաբերությունների ներկայացման համատեքստում (նանավոր դեմքեր, դեպքեր ու իրադարձություններ):

- ***Աշխարհագրություն*** – Բագրատունյաց թագավորության, Արաբական խալիֆայության պատմական տարածքներին համընկնող երկրներն ու բնակիչները այսօր, քարտեզի տվյալները նախկինում և այժմ:
- ***Հասարակագիտություն*** – «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակություն» շղթայի իրացում:
- ***Հայոց լեզու և գրականություն*** – պատմական փաստերի ու շրջանների շուրջ պատմական ավանդազրույցներ, այս կամ այն գործիչին նվիրված ստեղծագործություններ, պատմավեպեր:
- ***Նախնական զինվորական պատրաստվածություն*** – մարտավարության կանոններ, զենքերի տեսակներ:

6. **Դասատիպեր**

Համակցված-խառը դասատիպ

7. **Ուսուցման մեթոդներ, հնարներ**

- Երկխոսության մեթոդ, մտագրոհ (խթանման փուլ)

Աշակերտների օգնությամբ պարզել ժամանակաշրջանը, հիշել արքայատոհմի ներկայացուցիչներին, գրել անունները կպչուն թերթիկների վրա և փակցնել «Բագրատունյաց արքայատոհմ» ծառին:

- Զրույցի մեթոդ, ոչ ծավալուն դասախոսություն (իմաստի ընկալման փուլ)
- Ծրագրավորված մեթոդ (իմաստի ընկալման փուլ)

Էկրանին ցույց տալ Բագրատունյաց Հայաստանի տարածական պատկերը և հետագա փոփոխությունները (տեսողական ընկալման միջոցով տարածական փաստերը ավելի կտպավորվեն երեխաների հիշողության մեջ):

- Համագործակցային խմբերի ձևավորում (Կշռադատման փուլ)

Դասարանը բաժանել մի քանի խմբի: Յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի իրենց կողմից առանձնացված որևէ կարևոր իրադարձություն և արժևորի դրա կարևորությունը:

8. **Դասի փուլերը և ընթացքը**

ա) Կազմակերպչական աշխատանքներ

Նախապես պատրաստել «Բագրատունյաց արքայատոհմ» ծառը: Ընտրել հարմար քարտեզ:

- Կատարել սովորողների հաշվառում:
- Անցնել աշակերտների ուշադրության կենտրոնացմանը և նրանց նախապատրաստել իրենց իսկ միջոցով նոր նյութի բացատրմանը:

- Սահուն անցում կատարել Բագրատունյաց թագավորության թեմային՝ ապահովելով անկաշկանդ, բայց խաղաղ մթնոլորտ:

բ) Անցած նյութի հարցում և վերջնարդյունքների պարզում

- Ամփոփել «Հայկական մշակույթը 5-9-րդ դարերում» գլուխը, հարց ու պատասխան մեթոդը կիրառել և ստուգել աշակերտների տեղեկացվածության ու հիշողության մակարդակը:
- Հետադարձ կապի պահպանման միջոցով հայտորոշել դասարանի պատրաստվածության մակարդակը, շտկել թերացումներն ու անցնել առաջ:

գ) Անցում նոր նյութի ուսումնասիրմանը

- Առաջին հերթին աշակերտներին ներկայացվում է վերը բերված նպատակակետերն ու առանձնացված հիմնական խնդիրները:
- Անպայմանորեն անցած նյութի հետ աղերսների ստեղծում, որպեսզի աշակերտները ևս մեկ անգամ վերհիշեն անցածը, ամրապնդեն իրենց գիտելիքները ու ավելացնեն նորերը:
- Մատուցել նոր նյութը. Ի՞նչ ժամանակաշրջանի մասին է խոսքը, ովքե՞ր էին Բագրատունիները, ի՞նչ քայլեր ձեռնարկեցին երկրի անկախության ապահովման համար, անկախության համար մղված պայքարի ի՞նչ դրսևորումներ ի հայտ եկան, արքայատոհմն ի՞նչ իշխանություն ուներ հարակից շրջաններում, ինչպե՞ս անկում ապրեց և այլ զանազան հարցերի անդրադառնալ:

դ) Նոր նյութի ընկալում և ըմբռնում

- Ամբողջական պատկերացում տալ Բագրատունիների արքայատոհմի, անկախության ձևավորման նախապայմանների, թագավորության հզորացման և անկման մասին:
- Դասագրքի միջոցով աշակերտներին ներկայացված տեղեկության հետ միաժամանակ կարևորել լրացուցիչ նյութերի դերը: Առաջի հերթին դա կմատուցվի ուսուցչի կողմից, աշակերտներին էլ կտրվեն փոքրիկ հանձնարարականներ որպես ինքնուրույն աշխատանքներ յուրաքանչյուրին մեկական թագավորի կամ իշխանի մասին հետաքրքրի պատմական փաստեր ներկայացնելու մասով:
- Դասարանը բաժանել խմբերի ու խմբերի միջոցով ներկայացնել Հայաստանի, Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության միջև ստեղծված դիվանագիտական հարաբերությունները:

ե) Նոր նյութի ամրապնդում և իմաստավորում

- ❖ Բագրատունյաց թագավորների գահակալությանը նախորդող արքայատոհմերի իշխանության և նրանց իշխանության համեմատություն:
- ❖ Աշխատանքային տետրերում գրել Բագրատունյաց թագավորության հետ կապված կարևոր թվականները և տեղի ունեցած
- ❖ Միջառարկայական կապի շրջանակներում զուգահեռներ կանցկացվեն Բագրատունյաց թագավորության և օտարազգի թագավորների արքունական գործունեությունների համատեքստում:
- ❖ Կատարել տեքստի ուղղակի վերարտադրություններ: Աշակերտները կկարդան որոշակի հատվածներ ու իրենց անհասկանալի հարցերը կուղղեն, կծավալվի քննարկում, ու հարցերը կստանան իրենց պատասխանները:

զ) Նոր նյութի յուրացում

- ❖ Կատարել թեմայի ընդհանրացում,անդրադառնալ նոր անուններ, հասկացություններ բաժնին
- ❖ Աշակերտներին հնարավորություն տալ իրենց կողմից հիշարժան դարձած հատվածը վերապատմել:
- ❖ Անդրադառնալ աշակերտներին հուզող հացերին, որից հետո միայն նրանց հանձնարարել նոր դասը յուրացնել հաջորդ դասին ներկայացնելու համար:

Համակցված դասը կառուցվածքային առումով դասի թերևս ամենաճկուն տեսակն է, որը թույլ է տալիս մեկ դասաժամի ընթացքում լուծել միաժամանակ մի քանի խնդիրներ, մասնավորապես գիտելիքների ստուգում, նոր նյութի հաղորդում, ուսուցանվող թեմայի շուրջ մեթոդների կիրառում և որոշակի աշխատանքների կազմակերպում: Շատ կարևոր է նաև նոր նյութի մատուցումը կապակցել,համեմատականներ անցկացնել նախորդ թեմաների հետ, քանի որ նոր թեմայի յուրացումը ավելի արդյունավետ է դառնում, երբ այն կապակցում են արդեն ծանոթ թեմաների հետ,շատ կարևոր են նաև թեմատիկ ընթերցանությունները:

Ուսումնասիրվող թեմայի նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելու համար կարելի է օգտագործել քարտեզներ, թեմատիկ պաստառներ, հետաքրքիր սահիկաշարեր և ներկայացնել լրացուցիչ նյութեր թեմայի վերաբերյալ: Կարևոր է նաև

աշակերտների ներգրավումը թեմատիկ նյութերի պատրաստմանը, քանի որ նրանք մեծ ոգևորությամբ են մասնակցում այդ ամենին:

Աշակերտներին գնահատելիս պետք է կարևորել նրանց կարծիքը, դիրքորոշումը և վերաբերմունքը թեմայի վերաբերյալ,մեծ նշանակություն ունի նաև նրանց ստեղծագործական մոտեցումները գնահատելը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով զանազան աղբյուրներ, եկել եմ այն եզրակացության, որ Բագրատունի իշխանական տունն ունի հայկական ծագում, բացի այդ Բագրատունի իշխանական տան ներկայացուցիչները մշտապես ներգրավված են եղել Հայաստանի ներքաղաքական կյանքի տարբեր բնագավառներում: Անգամ Հայաստանի սահմաններից դուրս լինելով հանդերձ պահպանել են իրենց հայկական արմատները և ձգտել պետականության վերականգնմանը:

Ակնհայտ է դառնում, որ Բագրատունի թագավորների և նրանց ենթակաների միջև փոխհարաբերություններն այնքան էլ հարթ չեն եղել, և ենթակա պաշտոնյաները ձգտել են ինքնուրույնություն դրսևորել, դրան ի պատասխան Բագրատունիները նոր իշխանական տներ են ասպարեզ բերել՝ ձգտելով ամրապնդել սեփական իշխանությունը:

Արքունի գործակալություններից յուրաքանչյուրը, իր առջև դրված խնդիրները հաղթահարելով, նպաստում էր պետականաշինարարությանը, դե իսկ մարտական բանակը, որը համարվում է ուժեղ և ամուր պետության գրավականը, իրեն լիովին արդարացնում էր:

Կարող ենք ենթադրել, որ հայ եկեղեցու ողջ գործունեությունը՝ այդ թվում Բագրատունիների ժամանակաշրջանում, սոսկ կրոնական կազմակերպության հարց չէ, այլ ունի համահայկական ընդգրկուն նշանակություն, բացի այդ ունի նաև մշակութային և ազգապահպան նշանակություն:

Իմ կատարած անդրադարձը դեպի պատմական ակունքներ ևս մեկ անգամ փաստում է բազմադարյա պատմություն, հզոր պետություն ունենալու հիմքերը և իհարկե այդ ամենի ժառանգորդ լինելը: Պատմության յուրաքանչյուր փուլում մենք ունեցել ենք և՛ հաղթանակներ, և՛ պարտություններ, սակայն այդ ամենը մեզ չի կանգնեցրել, մենք շարժվել ենք առաջ և փաստել. «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

«Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորությունը» թեման ուսումնասիրելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

1. Ուսուցանվող նյութը դարձնել հնարավորինս հետաքրքիր՝ կիրառելով տարբեր մեթոդներ և չսահմանափակվել միայն դասագրքի նյութով:
2. Անհրաժեշտ է ներկայացնել և համեմատել տվյալ ժամանակաշրջանի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, արդյունքներն ու հետևանքները, հետևություններ անել հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածության վերաբերյալ, կապեր գտնել արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ:
3. Ներկայացնել և արժևորել Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, փորձել համեմատել տվյալ ժամանակաշրջանի և հայոց այլ քաղաքակրթական ձեռքբերումների հետ, գիտակցել ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
4. Փորձել կապեր գտնել Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորության ու արդի գործընթացների և զարգացումների միջև, ներկայացնել պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:
5. Դասի պլան կազմելիս կարևոր է դասի նպատակի հստակ ձևակերպումը: Դասի բովանդակությունը պետք է համապատասխանի նպատակին և աշակերտների պատրաստավծության մակարդակին: Դասապրոցեսում սովորողների առավելագույն ինքնուրույնությունը, դասի ժամանակ անհատական, խմբային աշխատանքների տարբեր ձևերի համադրումը նպաստում են նպատակի իրականացմանը: Այս գիտելիքներով, հմտություններով, արժեքներով օժտված աշակերտները դառնում են պատասխանատու և ինքնավստահ քաղաքացիներ, ովքեր գիտեն՝ ով են, որտեղից են գալիս և ուր են գնում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ասլանյան Ա., Հայաստանի պետության և իրավունքի պատմություն, Երևան, 2009, 219 էջ:
2. Բարխուդարյան Վ. և ուրիշներ, Հայոց պատմություն, Հատոր 2, Միջին դարեր (IV–XVII դ.-ի առաջին կես), Զանգակ հրատարակչություն, Երևան, 2014, 769 էջ:
3. Մաթևոսյան Ռ., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, 296 էջ:
4. Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, 397 էջ:
5. Սիմոնյան Ռ., Հայոց պատմություն, Երևան, 2000, 874 էջ: